Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4244

4

10

~~XII 510~~

~~2591~~

~~Изъ Рима~~

~~811~~

~~249~~

~~К Кирмаріди~~

~~1831го Ген. 6.~~

~~Кишинев.~~

# ԽՐԱՏ

Յաղագս պատուաստման նախապահ-
պանողական ծաղկան։

Թարգմանեցեալ ՚ի Ռուսաց լեզուէ ՚ի Հայկական բարբառ
՚ի Մելքիսեդեկէ Աւագ Քահանայէ Ղամազեան Թիֆ-
լիզեցւոյ։

՚Ի բարձրապատիւ Հայրապետութեան Տն̄
ԵՓՐԵՄԻ Սրբազնակատար Կաթուղիկոսի
Ամ̄ Հայոց. և Կաւալերի, որ ՚ի գերագահ
Աթոռն Արարատեան ՚ի մջ̄ Էջմիածին։

Եւ յառաջնորդութեան Հայոցն Ռուսաստանու
Տն̄ Յօհաննու արխաջան Արք Եպիսկոպոսի. և
սբ̄յն Աննայի առաջին աստիճան Կաւալերի։

Զգուշաբար տպեցեալ ՚ի վր̄ ձեռագրոյ Թարգմանչին։

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Բարձրագոյն հրամանաւ հաս-
տատեալ Տպարանի, Յովսէփ Ս. Յօհաննիսեան
որ ՚ի գահոյանիստն

ՍԱՆԿՏՊԵՏՐԲՈՒՐԳ,
1815.

1874 = 88

Отъ Мещана
Кондрата Кир-
керіянова
Священнику
Отцу
Кевригу-Лагуно-
ву.
Подарокъ.
1857 год.

Բազում և այլ և այլ հիւանդութեամբք տառապակիր մարդկայինս ազգ, բայց և ոչ միոյն 'ի նոցունց, պատճառեալ զայսպիսի տրտմալից հետևմունս նոցա. որպէս ծաղկին բնական: Դա տարածանի յաշխարհէ յաշխարհ և 'ի քաղաքէ 'ի քաղաք. ածելով զմահունս մեծամեծս 'ի վերայ ժողովրդեան:(*) Ոչ և մի եղանակ տարւոյ՝ խոչնդոտ լինի դժնէութեան նորա. նա ոչ խնայէ հասակի իմիք: Ծնօղք համոզեալք տենչալի յուսով՝ ունիլ զմխիթարութիւն ինչ 'ի ծերութեան, 'ի զաւակաց իւրեանց մեծաւ հոգունակութեամբ և աշ-

Ցաւագին վնասուց պատճառելոյ 'ի բնական ծաղկանէ:

*) Արևնահեղ պատերազմք և մահամատոյց հարուածոց չեն գործեալ երբէք զայդքան մեծամեծ թշուառութիս, որքան ծաղկան բնականի:

խատամօք սնուցելոց. զրկեն իսկ
և իսկ 'ի յայսմ հաճութենէ. կամ
'ի ժամանակս տղայութեան նոցա.
և կամ կորուսանեն զնոսա, 'ի հա
սանել նոցա առ արբունս հա-
սակի իւրեանց: Որդիք զրկեցան
'ի ծնողաց իւրեանց, այն ինչ ու-
նէին զկարիս տեսչութեան նոցա՝
և կամ ողջամիտ բնութիւնս.
ևս՝ առողջացեալսն յայսմ ախ-
տէ, բազում անգամ մնային բա-
պէք տգեղութեան 'ի վերայ ե-
րեսաց. և կամ կորուսանեն նո-
քա զշարժողութիւն անդամոց.
բայց որ ևս է թշուառագոյն զըր-
կէին 'ի լուսոյ աչաց: Նոյն ինքն
փլթթումն ծաղկան հասուցանէր
զսարսափ՝ ո՛չ միայն 'ի վերայ այնց
ընտանեաց. առ որս նոյն երևու-
թանայր. այլ և՝ տունք դրացեաց
առ զնախազգուշութեան չտային
մտանել առ ինքեանս, որոց վարա-

կէին ծաղկամբ. զի մի՛ տարափոխեսցի 'ի նոցանէ ախտակրութիւն ծաղկան, առ ինքեանս: Թող զի այսպիսեաց արգելոյր ևս մուտ 'ի հասարակական տեղիս:

Զանազան հնարք գտեալ լինէին 'ի յետս ընկրկել զթշուառութիւնն յառաջացեալս 'ի ծաղկէ:

Գուեհիկ ժողովուրդք՝ մինչ հաճաստէին 'ի վերայ ումեք, 'ի ծանօթից իւրեանց՝ կամ յազգականաց զծաղիկ բարի, մուծանէին 'ի տունս նոցա զմանկունս՝ և կամ զչափահասակս, տակաւին անտարափոխսն 'ի ծաղկանէ. և թողուէին զնոսա ընդ ախտացեալսն ծաղկամբ փոքր ինչ ժամանակ. որպէս զի տարափոխութեամբ՝ ընկալեալ էր նոցա զաղտ ծաղկի:

Հնար վարելոյ զ[illegible] ծաղկան 'ի նախապաշարմանէ ներհուծելոյ:

վերադարձեալքն 'ի տունս իւրեանց, տային զփողս ծաղկաւորաց: Քանզի կարծէին ըստ նախապաշարման իւրեանց, որպէս թէ գնեալ ծաղիկն թուլագոյնս ներգործէր. քանզի՝ որ ընկալեալ լինէր ձրի: Բայց այն ինչ գնօղն՝ վիճակեալ էր տկար կազմուածոյ, և կամ թէ՝ ունէր զօրամադրութիւն առ այլ ինչ հիւանդութիւն. յայնժամ գնումն այս՝ արժ լինէր կենօք չափ նմա:

Ժողովուրդք Թափառականք այն ինչ հաւաստէին զծաղիկ 'ի վերայ ուրուք ընտանեաց իւրեանց. յայնժամ թողուին զհիւանդն 'ի վայրս յապաստան ճակատագրի. հազիւ ուրեմն հասուցանելով նոցա զկերակուր և զըմպելի. ոչ համարձակեցեալ յաղենալ ընդ նոսա:

Եւս յուսալիր միջնորդ կալեալ եղև զառաջինն 'ի պատուաստել զբնական ծաղիկ մարդոյ։ Բայց յաղագս գործածութեան այսր հնարից, ընտրեալ լինէր յատկացեալ եղանակ տարւոյ. և մանաւանդ գարնան, կամ աշնան։ Բաց 'ի յայսմանէ հարկաւորէր ունիլ զմեծ զգուշութիւն 'ի յընթացս հիւանդութեան. և հանդերձ այսու ամենայնիւ՝ ըստ ծանօթութեան փորձառու բժշկաց 'ի թուոյ նոցունց, որոց պատուաստէին զծաղիկ, մեռանէին 'ի հարիւրոց մի։

Առաջին հնար նուաղեցուցանելոյ զհիւանդութեան՝ յառաջագոյն 'ի ծաղկէ։

Որ 'ի մարդկային երջանկութիւն, յարդի ժամանակիս դըտեալ եղև վասն ահարկու հիւանդութեանս այսորիկ. հնարք նախապահպանողական. սոսկական, աներկիւղ և օգտամատոյց. և այն

Արդի հնարք յաղագս նախապահպանողական 'ի ծաղկէ։

է, որ կատարի 'ի պատուաստումն ծաղկան կովու. որ վասն այն կոչի և այսու անուամբ: Իբրև զի նիւթս այս ծաղկան, ընկալեալ լինի 'ի կովու: Իսկ որովհետև նիւթս այս պատուաստի 'ի բազում հարիւր հազարաւոր անձինս, մեծաւ բաւականութեամբ չկորուսեալ ըզներգործութիւն իւր՝ պահէ զյատկութիւն նախապահպանող բնական ծաղկան մարդոյ, ուրեմն չէ պարտ կոչել նախապահպանողական ծաղիկ կովու. այլ մարդկան:

Այս հնարք 'ի վարկանի յամենայն եղանակի տարւոյ. և յիւրաքանչիւրում չափու հասակի: սկսեալ 'ի մանկութենէ մինչև ցըկատարեալ հասակ ամաց. այնք՝ որք ունին զնախապահպանողական ծաղիկ, ենթարկին ընդ թե-

թե արկածիւք, որք ոչ թողուն երբէք զկնի ինքեանց չարախտավատ հետեւմունս ։

Թէ զիարդ պարտ է պատուաստել զծաղիկն նախապահպանող։

Հնար պատուաստելոյ զնախապահպանողական ծաղիկ, կայանայ 'ի հետեւեալն յայդոսիկ ։ Նախ քան զպատուաստել զծաղիկ 'ի յերեխայս, կամ 'ի մարդիկ չափահասս . պարտ է լուացուցանել զնոսա 'ի բաղանիս և կամ յաւազանս ջերմ ջրով . որպէս վասն պահելոյ զմաքրութիւն, նոյնպէս և վասն կակղելոյ զմակերեւոյթ մարմնոյն, առ 'ի հեշտեաւ մարթանալոյ նոցա, ընկալնուլ զհիւթս ծաղկան։ Յետոյ պարտ է օծանել զծայր նշտրակին. յաղագս պատուաստելոյ զպատրաստականն թարախն ծաղկան (*) առացելոյ

---

*) Որոյ զծագրութիւն ցուցեալ է 'ի միասին Է արկածից նախապահպանողական ծաղկան յատկապէս ցուցելոյ։

յայնմանէ՝ որ պատուհասեալ է ծա-
ղիկ , կամ այնու՝ զոր պատրաստ-
եալ ունի 'ի վերայ ապիկոյ . որ-
պէս յայտնեցեալ է իսկ ստորև ։
Եւ ընդ նմին պարտէ կալնուլ ըզ
բազուկ, առ որում պատուհասեալ
լինի ծաղիկն ձախոյ ձեռամբ և աջ
ձեռամբ կալեալ նէշտրակաւ գոր-
ծել 'ի վերայ բազկան զփոքրինչ ցե
տումն ։ Ստորև ուսոյց, ցտեալքն
այսոքիկ պարտին լինել այնպէս
թեթև՝ զի այն ինչ հատանի մակա-
մորթ . ընդ նմաւ երևեսցի ա-
րիւնաջուր կամ աւիշկ, և ոչ ա-
րիւն ։ Զանզի արիւնն կարէ ող-
ղանել հոսմամբ իւրով զնիւթ ծաղ-
կան. ընդ նմին հարկէ ջանալ . զի
ընկալեալ նիւթ 'ի նէշտրակէ մի-
ասցի ընդ մակամորթոյ, օծանե-
լով զցտեալսն նովիմբ . կալնուլ
զբազուկ անծածկ 'ի թևէ շապ-
կի, մինչև ցամաքեսցի աւիշկն ։

ապա իսպառ թողուլ զնա հան-գըստութեամբ։ Զտեղին զայն՝ որոյ վերայ պատուաստեալ լինի ծաղիկն, չէ պարտ թանալ և ոչ փորել. մինչդեռ 'ի յընթացս 'ի վերայ եկեալ արկածից սորև ասելեաց. ո՛չ վերջասցի գլխովին կարմրութիւն։ Եթէ զկնի պատ-ուաստելոյ 'ի վերս յառաջնում կամ յերկրորդում աւուր, ո՛չ նըշ-մարեսցի ինչ, բաց 'ի ցտեցելոցն նըշորակաւ։ Իսկ յերրորդում՝ կամ 'ի յընթացս երից աւուրց, նշմարեալ լիցին շուրջ զցտեցե-լովք մանր մանր կարմրաժեռ խա-ղաճարոք. և 'ի չորրորդում և կամ 'ի հինգերրորդում դժգոյն կարմիր, բշտուկք 'ի տեղիս պատուաստեա-լըս, ունելով 'ի միջի փոսորակս։ 'Ի վեցերորդում կամ 'ի յեօթ-ներորդում աւուր. բշտուկքս այ-սոքիկ սկսանին մեծանալ և փոս-

Նշանք ճշմարիտ նախապահպանողական ծաղկին.

րակք լինին և՛ ճշմարտականք: ահա այս տայ զնշան հաւատարիմ, թէ աշխատանքն չեն եղեալ անօգուտ. և թէ նիւթ ծաղկան երևեցուցանէ զցանկալի ներգործութիւն իւր. յայսմ ժամանակի ընկալնօղն պատուաստմամբ զծաղիկն զգայ փոքր ինչ ջերմութիւնս. և մանաւանդ առերեկս լինի, գիշերն առփոքրմի, բայց ոչ շարունակ անհանգիստ. վերևին քրտունք նըուաղք ՚ի վերայ երեսաց նորա. և յերևան եղանէ թուլութիւն ինչ: ՚Ի յեօթներորդում կամ ութներորդում աւուր, բշտուկք մեծանան և լնանին լուսաթափանց շարաւով: Այն այս շարաւ պիտանի է ՚ի պատուաստել զայլն: (*)

*) Յոմանս ոչ ՚ի թուլակազմ մանկունս կամ ՚ի ցրտային եղանակի. այսպիսի արկածք առ դիպլին, ՚ի Տասներորդ և կամ ՚ի մետասաներորդում աւուր: բայց հասարա-

՚Ի ութներորդ՝ մինչ ցօր մետասան վերք ծաղկան մեծանան և լնանին թափանցիկ շարաւով կամ թարախիւ. և փոսորակք սկսանին ոչընչանալ ։ ՚Ի մետասաներորդում աւուր, շուրջ զլխօք ծաղկան, ընդլայնի գոյն կարմիր վճիտ. զան ՚ի վերայ ուռոյցք. և շարաւոյ կորուսեալ զթափանցութիւն իւր ՚ի վերս, լինի սպիտակագոյն, և մըսանք ընդ անթատակիւ ուռուցեալք՝ սկսանին ցաւիլ ։ Յայսմ ժամանակի երևի ջերմն և տապ, առաւելու ևս քանզև. քան ՚ի յաւուրս անցեալս. գայ քիրտն և երբեմն ապախորժութիւն կերակրոց ։

---

կօրէն հարկէ գիտել՝ թէ յորում աւուր առ. դիպի զկնի պատուհասանոյն։ այլ մինչ թարախն չէ անդրաշրջեալ ՚ի գոյն սպիտակ կամ դեղին. և լինի երևելի. յայնժամ միշտ պիտոյ է պատուհասառումն առ. այլս ։

Արկածք սյսոքին՝ երկարաձգին ածուրս մի կամ յերկուս: Յերկոտասաներորդում կամ յերեքտասաներորդում ածուր. ուռոյցք շուրջ զվիրոք ծաղկան. սկսանին նուաղիլ: վէրքն լինին ապխտակ դեղնաշուրթք և 'ի մէջ նոցա վէր երևին սպիք սևաթուրք 'ի չորեքտասաներորդում ածուր. սպիք սևաթուրք՝ լինին շողշողունք: Իսկ զկնի եօթնևտասաներորդ ածուր. և երբեմն 'ի քսաներորդում ածուր, ըստ ինքեանց թօթափին. և թողուն զկնի ինքեանց զփոսորակս և կամ զխորոփեալս ծածկեալս մաշկամորթով. որպէս և լինի սովորաբար զկնի բնական ծաղկան: Լինին պատահմունք. զի յընթացս գրեցեալ թեթև արկածիցդ, վերերևեսցին 'ի վերայ մարմնոյն փղթթմունք ըստ նմանութեան պղծակաց. որք զկնի վեր-

շասալոյ ծաղկան, ինքեանք ըստ
ինքեանց առանց դեղի, բոլորո-
վին ոչնչանան: Բայց մինչդեռ
երկարաձգի փթթմունս այս, իբ-
րեւ շաբաթս երկուս. յայնժամ
պարտէ ցուցանել բժշկին, որ ըստ
յատկութեան նորին՝ կարօղէ տալ
զդեղ ինչ: Սակայն պարտէ գի-
տել թէ փթթումն այս՝ ոչ լծակ
ցի ընդ վնասակար հետեւանց. և
ոչ իսկ ընդ ծանրագոյն արկածոց:

Մինչ ամենայն վերոյ գրեալ
թեթեւ արկածք 'ի յընթացս ժա-
մանակի երկարաձգին յամառա-
բար, որպէս ասացաւ վերագոյնդ.
և ծաղիկք համապատասխանիս անձ
ներաբար ցուցելոց արկածից. 'ի
յայսմ գծագրութենէ. յայնժամ
զծաղիկ զայդոսիկ. պարտէ համա-
րել նախապահպանողական: Բայց
եթէ զկնի պատուաստելոյն յերկ

[Margin note: [illegible] որոշել [illegible] ծաղ- կան 'ի ճշմա- րիտ նախա- պահպանողէ]

րորդում կամ յերրորդում աւուր լինի հրդեհ, նման այնց, որք լինին 'ի վէրս կամ 'ի պալարս փտութիւն. և պնծակք այտոքին՝ կամ պալարք՝ նախ քան զտասներորդ աւուրս չորանան կամ դառնան 'ի շարաւ փոխեցեալ. յայնժամ այսպիսի ծաղիկ, ո՛չ է նախապահպանող, այլ սուտ. և եթէ սուտ ծաղիկ րս այս՝ դիպեսցի ումեք, յայնժամ զկնի անցման նորին. պարտ է զնոյն պատուաստել քանի մի անգամ. մինչև ընկալցի զնականն վերոյ գրեալ նախապահպանողական ըզծաղիկ:

Թէ որպիսին հերպիսն ստեալ լինի եւրան 'ի պատուաստաւորեալոյ:

Նիւթ կամ շարաւ 'ի պատուաստել զծաղիկ առ այլսն. պարտ է լինիլ հեռեալ կերպին: 'ի յեօթներրորդ՝ ութերրորդ՝ իններրորդ և կամ 'ի տասներորդում աւուր. այն ինչ թէ՝ երևեսցի 'ի վէրս

ծաղկան պատուճառեալ շարաւ
ունի զգոյն յբստակ նման ջրոյ՝
այն է շողշողուն. յայնժամ պար-
տէ ցետուլ 'ի կողմանէ մակամոր-
թոյ ծաղկան. վերաց. և օծանել
'ի բշտեցելոց հոսեալ աւշկով
զծայր նէշտրակին: և ապա պատ
ուճառել այնու կերպիւ որպէս
վերագոյնդ յայտնեցեալ է: Իսկ
եթէ պահանջեսցէ հարկաւորու-
թիւնն յուղարկել զշարաւ ծաղ-
կան. 'ի տեղիս տարակացս. յայն-
ժամ 'ի բշտեցելոցն համամբ հո-
սեցեալ շարաւուլ ծաղկան. պարտ
է օծանել զփոքրիկ ապիկի, և ծած
կել զնոյն ինքեան համահաճասար
ապիկաւ. և զեզերսն նոցա ամրա
ցուցանել մեղրամոմով. փաթու-
թել զերկուսին կողմունս փամփըշ
տով և ուղարկել ուր ուրեք պա-
հանջէ հարկաւորութիւնն: զգու
շանալով՝ զի ապիկիք այնոքիւն ոչ



4744

Թողանիցին 'ի սաստիկ սառնամա-
նիս. կամ 'ի ջերմութեան. և ոչ
թէ աղտոտեսցեն իւղով, յոր-
ժամ գիտէ ոք՝ 'ի գործարկանել
'ի վերայ ապիկեաց զշարաւ մածու-
ցեալ. 'ի պատռճառել. պարտէ
նա կանոնաւ զնոյնս 'ի վերայ գոլոր
շեաց եռացեալ ջրոյ: Իբրև զի
լուծցի շարաւն և կամ արձակես
ցէ զնոյն միով կայլակամբ ջերմ
ջրոյ. և յայնժամ օծցէ շարաւով
այնուիկ զնէշտրակ. և պատռճառ-
տեսցէ զծաղիկ ըստ ասացելումն:

Թէ որպիսի զգուշու-Թիւն պիտի 'ի ժամանակի. արկ-ծից ծաղկան

Թէպէտ 'ի ժամանակս երկարու-
թեան վերոյ գրեալ արկածից, որք
'ի նախապահպանողական ծաղկանէ
դիպանին, ոչ պահանջեն զընդեր
կար զգուշութիւնս. և այնք՝ առ
որս պատռճառի ծաղիկ յամարայ
նի. կարօղեն շրջագայել 'ի մէջ ա
զատ օդոյ: Բայց 'ի ժամանակի աշ

նան, ձմերան և ամարան։ և նմանապէս ՚ի ժամանակի խոնաւ և ցուրտ եղանակի. յաղագս ապահով լինելոյ՝ պարտէ նոցա մնալ՚ի տանիւրեանց. իբրևզի՝ ոչ պատահեսցի նոցա, զիարդ և իցէ հիւանդութիւն։ ոչ տուեալ լինի նոցա կերակուր դժուարամարս, այն է խիւս թանձր. ձուք պնդախորովք. ապուխտ խոզենի. կաղամբ հում. կարկանդակ. պանրամայր և նմանք նոցին։ Այլ պարտէ ջամբել զարգանակ եփեալ մսով եզան. միրգս եփեալս. և նմանք նոցին. պահելով միշտ զքանակութիւնն չափաւորութեան։

Ծանօթութիւն վերոյ գրեալ նախապահպանողական ծաղկին, ոչ տարաժոխի առ այլսն ինքն ըստ ինքեան. մինչև ոչ պատուաստեսցի։ Այս արդիւնաւորի սեպհա-

կան մտադրութեան. որով հետև այն ամենայն օրէնք դարմանէ զկեանըս մարդկան. և կամ պահպանէ զառողջութիւն նորին. ՚ի վնասակարացն խորշելով դտանի կամ յատուկ աշխատանօք. և կամ նըպաստաւորութեամբ այլոց իրաց. այն է կերակուր՝ ըմպելիք՝ հանդերձ և նմանք նոցին։

՚Ի խժդժան այսմ, նաև ամենայն զգուշութեամբ չէ հնար դաղթ-չել ՚ի յախտակրական արկածից և մանաւանդ ՚ի բնական ծաղկէ ըղ-թշուառութիւն անհնարին. ՚ի վերայ սեռի մարդկութեան բերողէ։

Ընդդէմ պատուհասակոծ ախտիս այսօրիկ. ըստ աստուածային նախախնամութեան յայտնի եղեն հընարք վերադոյնդ գրեալ։ Նա՛ և

րաքանչիւր ոք ունելով զդիպուկ զայդ. եթէ չդարձուցէ զայն յօգուտ ընկերին իւրոյ. այնպիսին զրկեալ 'ի ստորակայ գելոց. ընդ ինքեամբ յորձկանս այսու անդարձ կորստեամբ. յաւէժաբար տանջեսցի 'ի խղճմտանաց իւրոց:

---

# НАСТАВЛЕНІЕ

## О ПРИВИВАНІИ ПРЕДОХРАНИТЕЛЬНОЙ ОСПЫ.

Способъ прививанія предохранительной оспы состоитъ въ слѣдующемъ: взявъ ланцетомъ или иглою оспенной матеріи, сколько возможно свѣжее, надлежитъ сдѣлать на верхней части руки, пониже плеча двѣ или три ранки, но такъ легко, чтобъ кровь едва показалась. Лѣвою рукою надобно снизу крѣпко держать руку дитяти такъ, чтобы кожа натянулась. Какъ скоро приподнята будетъ верхняя кожица; то надобно ланцетъ или иголку приподнять вверьхъ, дабы матерія удобнѣе сошла въ маленькую ранку; потомъ придержать нѣсколько пальцемъ находящійся въ ранкѣ кончикъ ланцета или иглы, и отнять потихоньку.

Оспенное вещество способнѣе къ прививанію, когда оное еще прозрачно и водяно, что бываетъ отъ 7 до 10 дня.

Пересылаемое изъ одного въ другое мѣсто оспенное вещество разводятъ, намочивъ немного теплою водою конецъ ланцета или иглы, которымъ и растираютъ засохшее оспенное вещество, а лучше подержать стеклышко надъ паромъ кипячей воды.

Первымъ знакомъ благополучнаго успѣха въ прививаніи оспы, показывается въ 3 или 4 день на томъ мѣстѣ, гдѣ проколота кожа, маленькой красной знакъ. — Мало помалу знакъ сей увеличивается, краснѣетъ, твердѣетъ и подымается на поверхности кожи.

Около 6-го дня, на срединѣ маленькой сей опухоли, показывается бѣлое нѣсколько прозрачное пятнышко, происходящее отъ раждающейся въ оспенномъ пузырѣ нѣкоторой мокроты, которая жидка и прозрачна, на подобіе воды. Пузырь сей мокротою наполняется и расширяется; никогда не превышаетъ въ окружности обыкновеннаго гороха; онъ въ срединѣ нѣсколько вдавленъ, а края его примѣтно возвышены.

Спасительная сія оспа навсегда предохраняетъ отъ губительной природной оспы. Она не подвергаетъ жизнь человѣческую ни малѣйшей опасности, и не оставляетъ по себѣ никакихъ вредныхъ слѣдствій. — Она не причиняетъ ни мало болѣзни. — На тѣлѣ человѣческомъ не оставляетъ нигдѣ знаковъ, кромѣ самаго привитаго мѣста.

Она не прилипчива и не иначе можетъ передана быть отъ одного человѣка другому, какъ чрезъ прививаніе.

Прививать ее можно во всякомъ возрастѣ, во всякое время года и даже хворымъ дѣтямъ, кромѣ весьма разслабленныхъ.

Во все теченіе предохранительной сей оспы, нѣтъ надобности давать дѣтямъ лѣкарства и носить ихъ въ баню.

Ребенокъ, коему прививаютъ оспу, не долженъ быть моложе одной недѣли.

Посредствомъ предохранительной сей оспы надѣяться можно, что гибельная и чумѣ подобная природная оспа наконецъ совершенно истребится. Благомыслящіе люди приглашаются къ приложенію старанія своего о содѣйствіи въ распространеніи сего, для рода человѣческаго, великаго благодѣянія.

*С. П. Бургскаго Императорскаго Всспитательнаго дома Главный Докторъ Лейбъ-Медикъ Статскій Совѣтникъ и разныхъ орденовъ Кавалеръ Яковъ Кильвейнъ.*

въ 4 день въ 8 день въ 10 день въ 12 день въ 18 день



ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ
ԷՋՄԻԱԾ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ